Սյունյաց երկիր
ՔԱՂԱՔԻ ՕՐԸ
www.syuniacyerkir.am
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
14 ՆՈՅԵՄԲԵՐԻ
2012Թ.
№ 28 (269)
ISSN 18293468



Կապանը նոյեմբերի 4-ին կրկին տոնեց քաղաքի օրը

Ասում են, թե հին ասպվածներն անգամ տոնական պահերին, երբ հնչել են բամբիռների ձայնն ու գուսանաց երգը, մոռացել են ճակատամարտի շռինդը, երկպառակությունները: Եվ խաղաղություն ու համերաշխություն է իջել այդժամ: Եվ այդ հրճվանքի մեջ նրանք խորհել են կատարվածի, ընդհանուր հոգսերի ու խնդիրների մասին:

Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

...Նոյեմբերի 4-ին Կապանում խաղաղության ու համերաշխության շունչն էր թեւածում: Եվ դա՝ մայիսյան ու սեպտեմբերյան ընտրական թոհուբոհից հետո: Հին եւ հավերժորեն նոր Կապանում տոն էր՝ նորոգվելու, մանկանալու, միմյանց սիրելու, հանուրի ջանքերը կրկին մեկտեղելու տոն: Այն, սակայն, որոշ առանձնահատկություններ ունեցավ: Չորսամյա պաշտոնավարությունից հետո քաղաքապետարանից հեռացող Արտուր Աթայանը կազմակերպել էր նորամուտի յոթ արարողություն, որը, կարծեք, յուրօրինակ հաշվետվություն էր՝ վերջին ամիսներին քաղաքապետի կատարած աշխատանքների, ավարտին հասցրած ծրագրերի: Արարողություններն անցան շքեղությամբ ու պերճությամբ, հարյուրավոր կապանցիների ինքնաբուխ մասնակցությամբ: Միջոցառումներին, քաղաքապետի հետ մեկտեղ, մասնակցում էին Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը (մարզպետը հանրապետությունից դուրս էր), մարզկենտրոնի ամենախոշոր ձեռնարկության՝ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ի եւ Կապանի բազմաթիվ այլ ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարներ: Ողջամիտ կլիներ, անշուշտ, այնտեղ տեսնել նաեւ Կապանի նոր քաղաքապետին, բայց...

Ոչ ոք չգիտի, թե քանի տարեկան է Կապանը: Բոլորը, սակայն, այդ հարցին առնչվելիս հիշում են Ստեփանոս պատմիչի՝ 5-րդ դարին ու Մանակկա եկեղեցուն առնչվող հիշատակությունը. *«...Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել»:* Բոլորը համոզված են նաեւ, որ Կապանի երթն անվախճան է, ինչպես եւ անվախճան է հայոց երթը: Եվ այդ երթից տարեկան մեկ օր պոկելով ու անցած-գնացածի մասին խորհելով, կատարվածն ու ձեռքբերումները ցուցանելով՝ կապանցին նորովի է ոգեկոչում իր մեծ ուխտը՝ արժանապատիվ տերը լինելու իր բնօրրանի ու հայոց նորանկախ պետության: Այդպես եղավ նաեւ այս անգամ՝ նոյեմբերի 4-ին:

Շատերին գուցեեւ ժամանակավրեպ թվաց տոնակատարությունը, անպատեհ՝ նախկին քաղաքապետից նոր քաղաքապետին իշխանությունը փոխանցելու օրերին, սակայն... Արտուր Աթայանը տոնը ճշմարտացիորեն համարեց Կապանինն ու կապանցիներինը, եւ իրեն իրավունք չվերապահեց խախտել տարիներով ձեւավորված ավանդույթը:

Օրվա միջոցառումներից մեկն էլ ընդունելությունն էր՝ քաղաքապետարանում կազմակերպված, որին մասնակցում էին քաղաքապետարանի աշխատակիցներ, քաղաքապետարանի ենթակա կազմակերպությունների ղեկավարներ: Ընդունելությունը, թեեւ գործընկերների ու թիմակիցների հրաժեշտի ու բաժանման խոսքեր էր ենթադրում, այլ ընթացք ունեցավ: Եվ քաղաքապետը, եւ մյուս արտահայտվողները խոսեցին նոր տեղում ու դերում Կապանին ծառայելու պատրաստակամության մասին:

Տոնական միջոցառումների մասին Վահրամ Օրբելյանի հրապարակումներն ու Աղավնի Նավասարդյանի լուսանկարները՝ հաջորդ էջերում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղաքի օրը

Հարկաբաժինը վերածվեց փառքի սրահի

Լուսանկարները՝ Ա. Նավասարդյանի

Արտուր Աթայանը, Սյունիքի փոխմարզպետ Վաչէ Գրիգորյանը, «ԴԳՄՔ» ՓԲԸ ղեկավարներ Իլյա Գարկովն ու Հրաչ Ջաբրայանը՝ փառքի սրահի բացման ժամանակ

Նարինե Բալայանը եւ Վարդան Ստեփանյանը կտրում են փառքի սրահի բացման ժապավենը

Քաղաքի օրվան նվիրված միջոցառումների շարքը մեկնարկում է Շմավոն Մովսիսյանի անվան թանգարանում, որտեղ տեղի ունեցավ մարտական փառքի սրահի բացման արարողություն, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչէ Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը, «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության տնօրեն Իլյա Գարկովը, վարչական գծով տնօրեն Հրաչ Ջաբրայանը, զոհված ազատամարտիկների ծնողներ, մտերիմներ, տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ:

Թանգարանի տնօրեն Լուսինե Դավթյանը բացման խոսքում արժեւորեց մերօրյա ազատամարտի մասնակիցների ավանդը՝ Հայաստանում եւ Արցախում խաղաղություն հաստատելու գործում: Նա նաեւ նշեց, որ սրահի վերաշինման նախագիծն իրականություն դարձավ հովանավորների շնորհիվ. սրահի հիմնանորոգումը կատարվեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության (գլխավոր տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան), իսկ կահավորումը եւ ձեւավորումը՝ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության հատկացրած միջոցներով: Փառքի սրահի մուտքը երիզող ժապավենը կտրելու պատիվը վերապահվեց զոհված ազատամարտիկներ Հարություն Բալայանի դստերը՝ Նարինեին եւ Լյուդվիգ Ստեփանյանի որդուն՝ Վարդանին: Մտնելով սրահ՝ միջոցառման մասնակիցները մեխակներ դրեցին խորհրդանշական անմար կրակի կողքին:

Վերաշինված սրահի մի անկյունում մերօրյա ազատամարտում ընկած ազատամարտիկների լուսանկարներն են եւ խորհրդանշական տողեր՝

Բարձրացրու գլուխդ, զինվոր,
Բաց արա հոգնած կոպերդ,
Քո սխրանքն անմահ է,
Քո անունը՝ մեր սրտերում:

Սրահի ցուցադրանքում ներկայացված են մերօրյա պատերազմում օգտագործված հրազենի տեսակներ («Գրադ» կայանք, ականանետ, տարբեր տրամաչափի փամփուշտներ, նռնակներ, ռազմի դաշտում օգտագործված ռադիոկայաններ), ազատամարտի մասնակիցների անձնական իրեր, պաշտոնական հաղորդագրություններ: Տխուր հիշողություններ կարող է արթնացնել միայն դեկտեմբերի 11-ին հակառակորդի կործանիչի կողմից Կապանի վրա նետած ավիառումբի զանգվածեղ բեկորը: Եվ լուսանկարներ, լուսանկարներ, որոնք վերակենդանացնում են պատերազմական օրերի դրվագներ (մարտական գործողություններ, բժիշկների ինքնամոռաց աշխատանք, հրետակոծված շենքեր, ընկած ազատամարտիկների հուղարկավորման արարողություններ):

Յուրաքանչյուր պատերազմ իր անհայտ զինվորն ունեցավ: Կապանյան գոյամարտը եւս ունեցավ մարտիկներ, որոնց ճակատագրերի մասին ցայսօր ոչինչ հայտնի չէ՝ Մարտուն Բադալյան, Յուրի Առուստամյան, Սուրիկ Գրիգորյան, Լեւոն Գաբրիելյան, Սարգիս Ղուկասյան, Արամայիս Վարդանյան, Վալերիկ Մանուչարյան, Արմեն Առաքելյան, Սենիկ Մարտիրոսյան, Արկադի Խաչատրյան, Սամվել Դավթյան, Վահան Դավթյան, Ռոման Մարտիրոսյան:

Լուսանկարների տակ «Անհայտ է ճակատագիրը քո» խորագիրն է, հուսի շողեր պարունակող բանաստեղծության տողեր՝

Եթե մինչեւ անգամ
Լսած լինես, թե այս աշխարհում չկամ,
Միեւնույն է՝ կգամ, ինչ էլ լինի, կգամ,
Ուր էլ լինեմ, կգամ:

Ցուցադրանքը չի սահմանափակվում միայն ազատամարտով: Տեղ է հատկացված պատերազմի օրերին սկզբնավորված ու ձեւավորված հայոց զինված ուժերին: Ահավասիկ՝ «Մեր անունը՝ հայկական բանակ» վահանակը:

Մարտական սրահի բացման առիթով խոսք ասաց «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Հրաչ Ջաբրայանը. **«Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների եւ անհետ կորածների հիշատակին նվիրված այս սրահն իսկապես հոգեհարազատ է բոլորիս, քանզի նրանք մեր բոլորի զավակներն էին: Նաեւ պիտի հիշենք, որ մայր հայրենիքում բնակվողները եւ սփյուռքահայերը ձեռք ձեռքի տված ազատագրեցին մեր պատմական Արցախ աշխարհը: Այդ ժամանակ ընդհանրապես տարակարծություն չկար, մտածելակերպի տարբերություն չկար: Ոչ ոք չմտածեց, որ այս կամ այն ազատամարտիկն այս կամ այն կուսակցությունն է ներկայացնում, կամ էլ այս կամ այն քաղաքից է եկել, քանզի բոլորի երակներով հայի արյուն էր հոսում: Եվ երբ անօրեն թշնամին ձեռք բարձրացրեց հայ ժողովրդի վրա, մենք ջախջախեցինք այդ ձեռքը, եւ եթե բարձրացնի նորից, նույնը կկրկնվի: Որեւէ մեկի մեջ կասկած թող չլինի, թե մեր կորուստը կմոռացվի:**

Իսկապես հպարտ եմ այսօր, որ պատիվ ունեմ ձեր առջեւ կանգնելու, որովհետեւ հայ ժողովրդի ապագան կերտողները եղան ձեր հարազատները, մեր զավակները: Երախտապարտ ենք ձեզ բոլորիդ եւ հպարտությամբ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ընկերության ղեկավարության կողմից փոխանցում եմ մեր սրտերի մեջ կուտակված գոհունակությունը: Պիտի միշտ մեր զավակների գովասանքը երգենք, որովհետեւ, ինչպես վաղամեռիկ Մոնթե Մելքոնյանն է ասել. «Եթե մենք կորցնեինք Արցախ աշխարհը, մենք կշրջեինք մեր պատմության վերջին էջը»: Այդ գիտակցության շնորհիվ է, որ չկորցրեցինք Արցախ աշխարհը: Այսօր Արցախը մերն է, մի երկիր ենք, մի ժողովուրդ, հզոր ժողովուրդ՝ ի պատիվ ձեր հարազատների: Մեր խոնարհումն ու հարգանքը բոլորիդ»:

– **Պատահական զուգադիպություն չէր, որ վերաշինված մարտական փառքի սրահի բացումը հենց այսօր եղավ, երբ տոնվում է քաղաքի օրը,** – ասաց զոհված եւ վիրավոր ազատամարտիկների ընտանիքների պաշտպանության «Ազատամարտ» կոմիտեի նախագահ Խորեն Հարությունյանը, – **այս քաղաքի համար 200-ից ավելի կռվող հատուցեց սեփական կյանքով, մի մասն էլ առողջությունը թողեց մարտի դաշտում: Այսօրվա հիշողությունը չի խամրի երբեք: Միաժամանակ այս սրահը ռազմահայրենասիրական դաստիարակության կենտրոն կդառնա քաղաքի դպրոցականների համար:**

Երկու զոհված ազատամարտիկի հայր Գառնիկ Ավանեսյանն իր խոսքում նախ գնահատեց թանգարանային գործի երախտավոր Շմավոն Մովսիսյանի վաստակը, ում ջանքերով մի հարկի տակ հավաքվեցին, մեկտեղվեցին պատերազմին առնչվող ցուցանմուշներ, փաստաթղթեր, հազվագյուտ լուսանկարներ, որոնց մի մասն այսօր ցուցադրվում է սրահում: **«Շնորհակալ ենք, որ մշտապես հիշում են զոհված տղաներին, դրանով մենք սփոփվում ենք, մեր հոգին փոքր-ինչ թեթեւանում է»,** խոսքը եզրափակում է նահատակ մարտիկների հայրը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

Արտուր Աթայանը զոհված ազատամարտիկների ծնողների հետ՝ փառքի սրահի բացումից առաջ

Կապանում ավելանում են խաղահրապարակները

Գովելի է, որ մեր քաղաքում ավելանում է խաղահրապարակների թիվը: Հանդիսության մասնակիցների հաջորդ կանգառն Արամ Մանուկյան փողոցում է, որտեղ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության եւ քաղաքապետարանի օժանդակությամբ շարք է մտել նոր խաղահրապարակ: Գեղեցիկ մտահղացումն իրականություն դարձավ «Վորլդ Վիժն ինտերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի (Կապանի տարածքային զարգացման ծրագիր) օժանդակության շնորհիվ, որը հատկացրել է 8.7 մլն դրամ: «Անդոկ» համատիրության նախագահ Արամ Մանուչարյանն օրվա խորհրդին պատշաճող խոսք ասելուց հետո հայտնում է, որ թաղամասի ֆուտբոլի հավաքականը համաքաղաքային մրցումներում հաղթող է ճանաչվել եւ առաջին մրցանակը՝ գավաթը հանձնում հաղթող թիմի ավագին: Միջոցառմանը տոնական երանգներ հաղորդեցին Կապանի մշակույթի կենտրոնի ստեղծագործական խմբերը, իսկ թաղամասի բնակիչները հյուրասիրության սեղան էին բացել:

Բաղաբերդ թաղամասում հանգստի եւ ժամանցի գոտի է շահագործման հանձնվել: «Բաղաբերդ» համատիրության նախագահ Արթուր Վարդանյանը նշում է հովանավոր կազմակերպությունների անունները՝ «Վորլդ Վիժն» կազմակերպություն (հատկացրել է 9 մլն 643 հազար դրամ), «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերություն, Կապանի քաղաքապետարան: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Ալֆինօ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (տնօրեն՝ Ռոբերտ Օվչյան): Թաղամասի բնակիչ Վաչե Արզումանյանը երախտագիտություն է հայտնում բարի գործի նախաձեռնողներին, իրականացնողներին, նաեւ միտք հայտնում, որ կարեւորը ոչ այնքան ունենալն է, այլ եղածը տիրոջ զգացումով պահպանելը: Հրավիրված հյուրերից մեկն էլ փորձում է կատակել. եթե այստեղ դեկորատիվ ծառեր էլ տնկեն, մի տասը տարի հետո դառնալու է փարիզյան անկյուն: Ոմանք էլ փորձում են քաղաքապետին ներկայացնել իրենց հուզող խնդիրները: Ժամանցի գոտու մոտակա շենքերի բնակիչները բողոքում են, որ առատ տեղումներից հետո անձրեւաջրերը եւ ձնհալքի ջրերը թափանցում են իրենց բնակարանները, իսկ մանկապարտեզի առջեւ լճակներ են գոյանում, ինչը մանկապարտեզի սաների եւ նրանց դաստիարակների առջեւ լրացուցիչ դժվարություններ է հարուցում: Քաղաքապետն էլ բնակիչներին հուսադրում է, որ քաղաքում տանիքապատման աշխատանքներ իրականացվում են, եւ հավանաբար իրենց էլ հերթը կհասնի:

Լուսանկարը՝ Ն. Նավասարդյանի

4 նոյեմբերի 2012թ., Բաղաբերդ թաղամասի նոր խաղահրապարակը

Բաղաբերդ թաղամասն ունեցավ հիմնանորոգված ակումբ: Ընդհանրապես թաղամասը կտրված է քաղաքի կենտրոնից, եւ տեղում ժամանցի վայր ունենալը հրատապ հարց էր դարձել : Քաղաքապետարանի ակումբագրադարանային միավորման տնօրեն Սվետլանա Գրիգորյանը երախտագիտություն հայտնեց «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Հրաչ Զաբրայանին եւ Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանին՝ թաղամասի բնակչության ժամանցի եւ հանգստի հարցին լուծում տալու համար:

Մարզկենտրոնում խաղահրապարակներ են բացվել նաեւ Հունան Ավետիսյան թաղամասում՝ նախկին կոմունալ տնտեսության արտադրական վարչության շենքի հարեւանությամբ: Այստեղ շարք է մտել մանկական խաղահրապարակ եւ մինի ֆուտբոլի խաղադաշտ: Զանգվածային սպորտի զարգացմանը միտված այս օբյեկտները շարք են մտել Կապանի քաղաքապետարանի եւ ամերիկյան «Քաուն-թերփարթ ինտերնեյշնլ» կազմակերպության գրասենյակի հովանավորությամբ, իսկ շինաշխատանքներն իրականացրել է «Էվիամ» ՍՊ ընկերությունը: Ի դեպ, քաղաքապետը միացավ պատանի ֆուտբոլիստներին եւ նույնիսկ գոլ խփեց:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հոգատարություն մանուկների հանդեպ

Տոնական տրամադրություն էր նաեւ քաղաքի երկու մանկապարտեզում: N7 նախադպրոցական ուսումնական հաստատությունում մանուկները հյուրերին դիմավորում են գրական-երաժշտական համադրույթով, նաեւ թոթով լեզվով իրենց համար բարեհարմար պայմաններ ստեղծելու առիթով շնորհակալություն են հայտնում ձեռնարկի հեղինակներին: Երախտիքի խոսքեր է հղում նաեւ ՆՈՒՅ-ի տնօրեն Ռուզաննա Հարությունյանը, իսկ շինարարները հովանավորների («Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերություն եւ Կապանի քաղաքապետարան) օժանդակությամբ բարեկարգել են նախակրթարանի դահլիճը, որտեղ մանուկները մարմնակրթության եւ գեղագիտական դաստիարակության դասեր են առնում: Մեզ հետ զրույցում Ռ.Հարությունյանը տեղեկացնում է, որ «Էվիամ» ՍՊԸ-ն նաեւ նորոգել է նախասրահը, երկու սանհանգույց եւ մեթոդական կաբինետը: Նաեւ համոզմունք հայտնեց, որ բարենորոգումները կլինեն շարունակական:

Կապանի N1 նախակրթարանի կոլեկտիվին եւ բարի գործի նախաձեռնողներին շնորհավորելու էին եկել ծնողներ՝ երեխաների հանդեպ դրսեւորած ուշադիր եւ հոգատար վերաբերմունքի համար: Նախակրթարանի տնօրեն Քրիստինե Սողոմոնյանը ներկաներին տեղեկացրեց, որ հիմնանորոգումից հետո իր դռներն է բացում երկու խմբասենյակ: Ընդամենը վեց ամիս առաջ մի ծրագրով նորոգվեցին սանհանգույցները, որից հետո գաղափար հղացավ նաեւ նորոգել խմբասենյակները: Այս ծրագիրը կյանքի կոչվեց Կապանի քաղաքապետի օժանդակությամբ, իսկ շինաշխատանքներն իրականացրեց «Էվիամ» ՍՊ ընկերությունը (տնօրեն է. Հովհաննիսյան): Մանուկների կրթության եւ դաստիարակության նպատակով նպաստավոր պայմաններ ստեղծելու համար երախտագիտություն հայտնվեց բոլոր բարերարներին: Ծնողներից մեկն ավելի պատկերավոր արտահայտվեց վերջիններիս հասցեին. «Այս փոքրիկ մոլորակում դեռեւս հրաշագործներ կան»: Մի ուրիշն էլ ասաց, թե նախաձեռնության հեղինակները պատասխանատվությամբ են ձեռնարկել գործը, քաջ գիտակցելով, որ մանկապարտեզում են հասակ առնում ապագա մանկավարժը, բժիշկը, քաղաքապետը: Կապանի քաղաքապետն էլ կատակելու տվեց, թե միեւնույն է՝ այդ մանկապարտեզներից ինքը ձեռք չի քաշելու, քանի որ այդտեղ հաճախում է իր թոռը:

Մնում է հուսալ, որ «Լավագույնը՝ երեխաներին» կարգախոսը կընդունեն եւ կիրագործեն բոլորը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Լուսանկարը՝ Ն. Նավասարդյանի

Կապանի N1 մանկապարտեզի նորոգված խմբասենյակում:

Լուսանկարը՝ Ն. Նավասարդյանի

Իլյա Գարկովն ու Արտուր Աթայանը N7 մանկապարտեզում կտրում են վերանորոգված դահլիճի մուտքը երիզող ժապավենը

Լուսանկարը՝ Հեղինե Գեւորգյանի

Ընդունելություն քաղաքապետարանում

Օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ ընդունելություն, որին մասնակցում էին քաղաքապետարանի աշխատակազմը եւ քաղաքապետարանի ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցները: Ըստ ամենայնի դա հրաժեշտի հանդիպում էր, եւ քաղաքապետը հանդես եկավ փոքրիկ հաշվետվությամբ: 2012-ն Արտուր Աթայանի կարծիքով՝ հաջող տարի էր՝ նախեւառաջ քաղաքի բնականոն կենսագործունեությունն ապահովող մի շարք խնդիրների լուծման առումով: Հաջողություններ են գրանցվել ճանապարհաշինության, դպրոցաշինության, առողջապահության ոլորտներում: Նոր խաղահրապարակների շահագործումից եւ մանկապարտեզների հիմնանորոգումներից զատ՝ մարզկենտրոնում իրականացվել են ասֆալտապատման զգալի աշխատանքներ: Վերաշինվել է Արամ Մանուկյան փողոց - Հալիձոր թաղամաս ճանապարհահատվածը, որը զգալիորեն բեռնաթափել է Քաջարանյան մայրուղու երթեւեկությունը: Ասֆալտապատում է իրականացվել Մինաս Պապյան փողոցում եւ Շահումյան փողոցի գետափնյա հատվածում, նույնը՝ Շինարարների եւ Դավիթ Բեկ թաղամասերում: Հիմնանորոգվել եւ բուժսարքավորումներով համալրվել է Կապանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքը: Քաղաքապետը հայտնեց, որ երկու օր առաջ ստորագրել է Կապանի բժշկական կենտրոնի վերակառուցման համար թույլտվություն.

Լուսանկարը՝ Ս. Ղարիբյանի

պետությունը 1 մլրդ դրամ է հատկացնելու շինաշխատանքների եւ բժշկական կենտրոնը բուժսարքավորումներով համալրելու նպատակով:

Քաղաքապետը շնորհակալություն հայտնեց Սյունիքի մարզպետարանին՝ քառամյա համատեղ աշխատանքի եւ արդյունավետ համագործակցության համար: Երախտագիտություն հայտնեց նաեւ՝ իր ձեւակերպմամբ քաղաքապետարանի մշտական բարեկամներին՝ գործընկերներ «Զանգեզուրի ՊՄԿ» եւ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերություններին, որոնք վերջին երկու տարում առավել հետեւողական մասնակցել են քաղաքում իրականացվող ծրագրերին: Ա.Աթայանը նաեւ իր բարեմաղթանքը հղեց քաղաքապետարանի աշխատակազմին քառամյա համագործակցության համար, որն իր բնորոշմամբ եղել է փոխըմբռնման մթնոլորտում:

■

Տոնը եզրափակվեց համերգով

«Քեզ համար, Կապա՛ն» խորագիրը կրող քաղաքի տոնին նվիրված միջոցառումների շարքը եզրափակվեց համերգային ծրագրով, որը ներկայացրին Կապանի մշակույթի կենտրոնի ստեղծագործական խմբերը: Կենտրոնի թատերական ստուդիայի սաները դրվագներ ներկայացրին Կապան քաղաքի տարբեր ժամանակահատվածների իրադարձություններից՝ բեմահարթակում ստեղծելով յուրօրինակ կոլորիտ: Այդ ամենին նպաստեց պտտվող բեմը: Հնչեցին տարբեր ժողովուրդների եւ տարբեր ժանրերի երգեր: Համերգին իր մասնակցությունն էր բերել Կապանում ճանաչված երգիչ Արմեն Պետրոսյանը (Բեստ) եւ նրա որդին՝ Գարին, ովքեր հանդես եկան մեկական կատարումով: Համերգը եզրափակվեց դարձյալ թատերականացված փոքրիկ բեմադրությամբ, որը ներկայացնում էր հայկական հարսանիքը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Լուսանկարը՝ Դ. Գեւորգյանի

Արտուր Աթայանի ուղերձը կապանցիներին

Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը պաշտոնաթողության օրը՝ 2012թ. նոյեմբերի 13-ին, ուղերձ հղեց կապանցիներին: Ուղերձի տեքստը՝ ստորեւ:

ԽՈՍՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Սիրելի՛ հայրենակիցներ

Չորսամյա պաշտոնավարությունից հետո հայտնի պատճառով վայր եմ դնում Կապանի քաղաքապետի լիազորություններս եւ պարտքս եմ համարում խոհերս հայտնել ձեզ, քանզի ձեր տված մանդատով էի գլխավորում համայնքային իշխանությունը:

Ասեմ, որ խոսքս բաժանումի կամ հրաժեշտի խոսք չէ եւ չի կարող այդպիսին լինել: Կապանն իմ հարազատ բնօրրանն է, եւ վաղվա օրվա ծրագրերս բացառապես կապված են Կապանի ու կապանցիների հետ: Ասեմ նաեւ, որ եղել ու մնում եմ ձեզանից մեկը, մնում եմ ձեզ հետ ու այսուհետ եւս հնարավոր ամեն ինչ անելու եմ մեր սքանչելի քաղաքի առջեւ ծառացած խնդիրների լուծման համար:

Ներկա ճամփաբաժնում, այնուամենայնիվ, ուզում եմ առանձնահատուկ շնորհակալությունս հղել ձեզանից յուրաքանչյուրին, Կապանի ամբողջ հասարակությանը: 2008 թվականին դուք ոչ միայն ինձ վստահության քվե տվեցիք, այլեւ մինչեւ վերջ հավատացիք ու սատարեցիք ինձ, մինչեւ վերջ եղաք հարազատ ու մերձավոր: Չլինեին ձեր սերն ու նվիրումը, չէին լինի այն հաջողությունները, որ արձանագրվեցին մեր քաղաքում: Իսկ Կապանում՝ մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, այդ ժամանակաընթացքում լուրջ տեղաշարժեր գրանցվեցին:

Գոհունակությունս եմ հայտնում Կապանի քաղաքապետարանի աշխատակազմին, ավագանու անդամներին, լրատվամիջոցներին: Նրանց աջակցությամբ կարողացա ի կատար ածել նախընտրական խոստումներս, քաղաքապետի պարտականություններս:

Անցած չորս տարում համագործակցության լավ մթնոլորտ էր ստեղծվել քաղաքապետարանի եւ Սյունիքի մարզպետարանի, «Զանգեզուրի ՊՄԿ» եւ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունների, մարզկենտրոնի գրեթե բոլոր կազմակերպությունների եւ ընկերությունների միջեւ՝ ի շահ Կապանի, ինչի համար նրանց ղեկավարներին նույնպես երախտագիտությունս եմ հայտնում:

Չեմ կարող չանդրադառնալ տեղական ինքնակառավարման մարմինների վերջին ընտրություններին: Քաղաքական այդ միջոցառումը մեր օրերի համար մի զրնգուն արթնացում էր, ինչն արդեն իսկ ոսկե տառերով է գրվել Կապանի պատմության մեջ: Կապանը ցույց տվեց, որ սկզբունքային, առանցքային հարցերում ինքը մի բռունցք է, որի հետ չի կարելի պարտադրանքի, ուժի լեզվով խոսել, որքան էլ ինքը համբերատար է ու հանդուրժող: Կապանցին ցույց տվեց, որ իր երկրի տերն է, մարդկային ու քաղաքացիական վեհ արժանիքների կրող, արժանապատիվ հայրենիքի կառուցման ջատագով: Այդ ամենի համար խոնարհվում եմ կապանցու առջեւ ու երիցս հայտարարում՝ հպարտ եմ, որ կապանցի եմ:

Սիրելի՛ հայրենակիցներ

Կապանը մեր մայր ծնողն է, իսկ զավակները երբեք եւ ոչ մի պարագայում ծնողից նեղանալու ու մի կողմ կանգնելու իրավունք չունեն, որքան էլ ոմանք դրա համար բազում առիթներ տվեցին մեզ: Այնպես որ՝ մենք՝ յուրաքանչյուրս մեր տեղում եւ մեր կարելիությունների չափով, ամեն ինչ պետք է անենք մեր քաղաքի լինելության եւ զարգացման, մեր քաղաքի առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծման համար: Համոզված եմ՝ դա է մեր բաժին ժամանակի գերխնդիրը:

Ուրեմնեւ՝ թող մեր քաղաքի բարի ու հպարտ երթը շարունակվի գալիքում: Իսկ մենք այսուհետ եւս կհանդիպենք մեր քաղաքի հոգսերով ու տոնական առիթներով, կհանդիպենք իբրեւ հարազատ ու մերձավոր:

Կրկին հարգանացս հավաստիքն եմ հղում ձեզ եւ մաղթում անձնական երջանկություն, հաջողություններ՝ ի փառս եւ զորություն մեր քաղաքի ու Հայաստանի Հանրապետության:

■